ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.03.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2022/16

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ

Բողոք բերող՝ «Ֆոտոն» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչներ՝ Լ. Մաքյանի, Հ. Ղազարյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԱՄՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(2022/2-Ս)» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, սննդամթերքի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Ֆոտոն» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 02.02.2022թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել «ԱՄՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(2022/2-Ս)» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթը կամ չեղյալ հայտարարել «ԱՄՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(2022/2-Ս)» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 02.02.2022թ.-ին:

03.02.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/16 համարի ծածկագիրը:

11.02.2022թ.-ին և 04.03.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 11.02.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 04.03.2022թ.-ին:

2. <u>«Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Ֆոտոն» ՍՊԸ-ն 02.02.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման համար 27.01.2022թ.-ին հրապարակվել է ԱՄՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(2022/2-Ս) ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

27 հունվարի 2022թ. մինչև ժամը 14.00-ն «ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթը գնահատող հանձնաժողովի կողմից չի ընդունվել հիմք ընդունելով այն փաստը, որ ներկայացված փաթեթի ծրարի վրա եղել է ընկերության տնօրենի ֆաքսիմիլային ստորագրությունը (իսկ ծրարի մեջ եղել են տնօրենի կողմից կնքված և ստորագրված հայտի բնօրինակ տարբերակները):

Պատվիրատուի կողմից չընդունվելով «ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը խախտվել է «Գնումների մասին» 27 օրենքի 3-րդ հոդվածով և 34-րդ հոդվածով սահմանված պահանջները:»:

Ելնելով վերոգրյալներից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ԱՄՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(2022/2-Ս)» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից

ներկայացված հայտի փաթեթը կամ չեղյալ հայտարարել «ԱՄՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(2022/2-Ս)» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը:

3. <u>«Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 03.02.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/1900-2022 գրությամբ դիմել է «Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 02.02.2022թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 07.02.2022թ.-ին ներկայացված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 03.02.2022թ.-ի գրության հայտնում եմ Ձեզ, որ «Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԱՄՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(2022/2-Ս) ծածկագրով մրցույթի շրջանակներում «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 2022թ.-ի հունվարի 27-ին ներկայացվել է մասնակցության հայտի փաթեթ, որը սակայն վերոնշյալ մրցույթի հայտերի բացման նիստում գնահատող հանձնաժողովի կողմից նույնությամբ ետ է վերադարձվել, քանի որ հայտը պարունակող ծրարը ձեռագիր ստորագրված չէր:

Հայտերի բացման նիստում գնահատող հանձնաժողովի՝ «Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացված մասնակցության հայտի փաթեթի նույնությամբ ետ վերադարձի համար, հիմք են հանդիսացել՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ՝ (այն է՝ գործարքներ կնքելիս ստորագրությունների մեխանիկական և պատճենահանման այլ միջոցներով ֆաքսիմիլ վերարտադրությունների, էլեկտրոնային թվային ստորագրության կամ իր ստորագրության այլ նմանօրինակի օգտագործում թույլատրվում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում և կարգով), ինչպես նաև 4-րդ (այն է՝ եթե քաղաքացին ֆիզիկական արատի, հիվանդության կամ անգրագիտության պատճառով չի կարող իր ձեռքով ստորագրել, ապա նրա

խնդրանքով գործարքը կարող է ստորագրել այլ քաղաքացի: Վերջինիս ստորագրությունը պետք է վավերացնի նոտարը կամ նման նոտարական գործողություն կատարելու իրավունք ունեցող այլ պաշտոնատար անձը՝ նշելով այն պատճառները, որոնց ուժով գործարք կնքողը չի կարողացել այն ստորագրել) կետերի դրույթները, ինչպես նաև հաշվի են առնվել ԱՄՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(2022/2-Ս) ծածկագրով մրցույթի հրավերի 2-րդ մասի 3-րդ կետի 3.1/ այն է՝ ծրարը և սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ/ և 3.3 /այն է՝ սույն հրահանգի 3.1 և 3.2 կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին/ ենթակետերով սահմանված պայմանները:»:

Ի լրումն ներկայացված դիրքորոշման, Պատվիրատուն 14.02.2022թ.-ին թիվ 01/13 գրությամբ հայտնել է նաև հետևյալը.

«Ի լրումն Ձեզ ներկայացված 2022 թվականի փետրվարի 07-ի թիվ 11/1 գրության հայտնում եմ, որ 2022 թվականի հունվարի 27-ի ժամը 14:00-ին կայացած թիվ ԱՄՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(2022/2-Ս) ծածկագրով գնման ընթացակարգի նիստի ձայնագրության ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ նիստին ներկա «Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացուցչից տվյալ պահին հարցում չի արվել ստորագրության ֆաքսիմիլե լինելու վերաբերյալ և 2022 թվականի փետրվարի 11-ին կայացած ԳԲՔԱ-ԼՕ-2022/16 բողոքի քննության վերաբերյալ առաջին նիստի ընթացքում «Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ Հայկ Ղազարյանի կողմից պնդումը այն մասին, որ ծրարի վրա դրված ստորագրությունը ֆաքսիմիլ վերարտադրություն լինելու փաստը պարզվել է բացման նիստի ընթացքում «Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացուցչի հետ հարց ու պատասխանի միջոցով, հանդիսանում է շփոթության արդյունք: Տվյալ դեպքում հանձնաժողովը մերժման որոշումը կայացրել է այդ պահին ծրարի ուսումնասիրությամբ, քանի որ անզեն աչքով հստակ երևում է, որ ստորագրությունը ձեռագիր չէ, ինչը նաև ապացուցվում է բողոքաբերի կողմից ներկայացված բողոքում նշված հետևյալ նախադասությամբ՝ «27 հունվարի 2022թ մինչև ժամը 14:00-ն «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթը գնահատող հանձնաժողովի կողմից չի ընդունվել հիմք ընդունելով այն փաստը, որ ներկայացված փաթեթի ծրարի վրա եղել է ընկերության տնօրենի ֆաքսիմիլային ստորագրությունը (իսկ ծրարի մեջ եղել են տնօրենի կոմից կնքված

և ստորագրված հայտի բնօրինակ տարբերակները)»: Անդրադառնալով բողոքում նշված այն մտքին, որ հանձնաժողովի կողմից ծրարը չի ընդունվել, տեղեկացնում եմ, որ ծրարը ոչ թե չի ընդունվել, այլ ընդունվել, գրանցամատյանում գրացվել, այնուհետ հանձնաժողովի կողմից մերժվել և նույնությամբ վերադարձվել է «Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացուցչին:

Ելնելով վերոգրյալից գտնում եմ, որ հանձնաժողովը մերժելով հայտը գործել է իրավաչափ:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2022/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից 20.01.2022թ.-ին հայտարարվել է «ԱՄՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(2022/2-Ս)» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 27.01.2022թ.-ին ժամը 14:00-ին:

iii. Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ գնման գործընթացն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդված 6-րդ կետի համաձայն:

iv. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ ընկերությունների, հայտ է ներկայացրել նաև «Ֆոտոն» ՍՊԸ-ն:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից «Ֆոտոն» ՍՊԸ-ի հայտը գրանցվել է գրանցամատյանում 27.01.2022թ.-ին ժամը 13:54-ին:

vi. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) կողմից հայտերի բացման և գնահատման նիստի վերաբերյալ որևէ արձանագրություն չի հրապարակվել www.gnumner.am կայքում:

vii. Պատվիրատուի կողմից 07.02.2022թ.-ին և 14.02.2022թ.-ին Բողոքներ քննող անձին տրամադրված նյութերում հայտերի բացման և գնահատման նիստի վերաբերյալ որևէ արձանագրություն նույնպես առկա չէ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 02.02.2022թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ

ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 30-րդ հոդվածի.

- 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

- 2-րդ մասի համաձայն՝ փաստաթղթային ձևով հայտը ներկայացվելու դեպքում մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձում է այն ներկայացնողը: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և հրավերում նշված թվով պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

- 3-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 2-րդ մասում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝

1) պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

2) մրցույթի ծածկագիրը.

3) «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը.

4) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

- 4-րդ մասի համաձայն՝ հայտերը քարտուղարը գրանցում է գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

- 5-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի պահանջներին չհամապատասխանող հայտերը գնահատող հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը փաստաթղթային ձևով հայտ ներկայացնելու դեպքում

բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը դնում է ծրարի մեջ, որը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը, իսկ ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում է պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն), մրցույթի ծածկագիրը, «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը, մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը: Ծրարում առկա փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և հրավերում նշված թվով պատճեններից, իսկ փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Քարտուղարի կողմից հայտերը գրանցվում է գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը, իսկ այն հայտերը, որոնք չեն համապատասխանում վերոնշյալ պահանջներին գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի բացման նիստում մերժվում են և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 39-րդ կետի համաձայն՝ բացառությամբ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կատարվող գնումների՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերը գրանցում է գրանցամատյանում՝ ըստ դրանց ստացման հերթականության, գրանցամատյանում նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով դրա մասին տրվում է տեղեկանք: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը գրանցամատյանում չեն գրանցվում և դրանք՝ ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարի կողմից վերադարձվում են: Գրանցամատյանի՝ բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը սույն կարգի 43-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված արձանագրության հետ մեկտեղ հրապարակվում է տեղեկագրում:

Կարգի 40-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում նույն կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը նախագահին (նիստը նախագահողին) փոխանցվելուց հետո հանձնաժողովը գնահատում է հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և բացում համապատասխանող գնահատված հայտերը, բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին:

Կարգի 43-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի

քարտուղարը հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը և սույն կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի հիման վրա ստացված հիմնավորումների քննարկման ամփոփաթերթը, որը պարունակում է տեղեկություններ նաև հիմնավորումները ստանալու ամսաթվի և էլեկտրոնային փոստի հասցեների վերաբերյալ, հրապարակում է տեղեկագրում…:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ բացառությամբ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կատարվող գնումների՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերը գրանցում է գրանցամատյանում, իսկ գնահատող հանձնաժողովը գնահատում է հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը: Հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության, ինչպես նաև գրանցամատյանի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակում է տեղեկագրում:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ «Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից 20.01.2022թ.-ին հայտարարված «ԱՄՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(2022/2-Ս)» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 27.01.2022թ.-ին ժամը 14:00-ին, որին մասնակցելու նպատակով, հայտ է ներկայացրել նաև «Ֆոտոն» ՍՊԸ-ն, որի հայտը գրանցվել է գրանցամատյանում 27.01.2022թ.-ին ժամը 13:54-ին: Սակայն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի բացման և գնահատման նիստի վերաբերյալ որևէ արձանագրություն չի հրապարակվել www.gnumner.am կայքում, ինչպես նաև Պատվիրատուի կողմից 07.02.2022թ.-ին և 14.02.2022թ.-ին Բողոքներ քննող անձին տրամադրված նյութերում հայտերի բացման և գնահատման նիստի վերաբերյալ որևէ արձանագրություն նույնպես առկա չէ:

Վերոհիշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, սույն գործում առկա փաստերը համադրելով նորմերին՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ-ը, «ԱՄՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(2022/2-Ս)» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակում հայտերի բացման և գնահատման, ինչպես նաև գրանցամատյանի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակները հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի

հաջորդող աշխատանքային օրը չի հրապարակել տեղեկագրում, թույլ տալով Կարգի 39-րդ կետի, 40-րդ կետի 2-րդ և 43-րդ կետի 1-ին ենթակետերի դրույթների խախտում, ըստ էության զրկելով բոլոր մասնակիցներին Օրենքով պահպանվող մրցակցության և հավասարության սկզբունքներից բխող մասնակցության հավասար պայմաններ ունենալու իրենց իրավունքից:

Ընդ որում, հարկ է նկատել, որ գործով առկա չէ ապացույց առ այն, որ Ընկերության հայտը գնահատվել է: Այլ կերպ ասած՝ գնահատման արդյունքում կազմված արձանագրության բացակայությունն ինքն իրենով փաստում է, որ Ընկերության հայտը Օրենքով ու Կարգով սահմանված դրույթների պահպանմամբ չի գնահատվել:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից 20.01.2022թ.-ին հայտարարված «ԱՄՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(2022/2-Ս)» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կարգի վերոնշյալ կետերի խախտման արդյունքում խախտվել է Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված պահանջները, որպիսի պայմաններում «Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքն հիմնավոր է և ենթակա բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 02.02.2022թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/16 ծածկագրով բողոքը բավարարել:

Պարտավորեցնել «ԱՄՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(2022/2-Ս)» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել և գնահատել «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**